Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

L4n
839-840

1999

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ–Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԱՆԳՈՅԺ

ԿՈՒՑ ՄԻ ՋՈՒՐ

ԻՒՐ

ԱՅՐԱԾ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՎԵՐԱՅ

ԿԸ ՍՐՍԿԷ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա.ԲԱՄԵԱՆ

1877

595

ԱՌ ՄԵԾԱՐՈՅ ՍԻՐԵԼԻԴ ԻՄ

ԱԲՐԱՀԱՄ ՍՕԼԱԽԵԱՆ

ՄՏԵՐԻՄ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ.

Կ. Լ. ԳՐԱԴԱՐԱՆ

2068

Վան վառուեցաւ, որ իմ եւ քո բնակասնունդ հայրենիքն է. անշուշտ ձեր ազնիւ սիրտն եւս մեր կարեվէր սրտին հետը վշտահար եղած է :

Այդ քաղաքաւեր կրակին համար, որ անխնայ այրեց լափեց մեր հայրենեաց կեանքը, ես մի կաթ ջուր պատրաստեցի, չէ թէ այրած ժողովուրդին մորմոքեալ սրտին ջուր տալու մտքով՝ զի դորա համար գետեր և ծովեր պէտք են՝ այլ մի միայն Վանայ դպրատանց աղքատիկ մանուկներուն ծարաւն ու պապակը զովացնելու համար:

Սոյն իմ արտասուաց մի կաթիլ ջուրը ձեր բարեսիրտ ազնուութեան կը յանձնեմ, որ զայն ձեր օգնական ջանիւք առատացնէք, այսինքն մամուլին տալով հոգայք տպագրութեան պէտքը, որոյ դուզնաքեայ արդիւնք նուիրենք հետ քեզ մեր հայրենեաց այն կարօտ մանուկներուն՝ որք այսօր անդպրոց, անգիրք և անթուղթ մնացին: Այս փոքրիկ բարոյական հացի նկանակը մեք մատակարարեմք, զի մեր բաժին է. իսկ հանապազորդական հացն թողումք թող Աստուած հո-

9839-60

Հք. 842

գայ, ոչ միայն տղայոց այլ և հարցն ու մարց: Ո՜հ, հայրերը չքաւորութեամբ թշուառացան և արդ անմխիթար դառնութեամբ կը հեծեծեն տան մէջ. գոնէ զաւակներ մխիթարուին դպրոցին տաճարին մէջ: Շէն քաղաքի մի վաճառականոցի խանութներ փակուեցան, չթողումք որ դպրոցներն էլ փակուին, մինչև յիշէ Աստուած և այցելութիւն լինի տառապեալ ժողովուրդին:

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

25 Յունվար 1877



ԿՈՒԺ ՄԻ ՁՈՒՐ

ԱՌ ԻՄ ԱՅՐԱԾ ՀԱՅՐԵՆԻՔ

Եղէ ես որպէս բու յաւերակի:
ՍԱՂՄ. ՃԱ. 6:

Ո՞տայր ինձ, ո՜հ, գերեցիկդ Վան, Վասպուրական աշխարհի զարդն ու պսակ, որ աւերակիդ ահիւնացեալ մոխրին վերայ նստելով՝ արժանի լինէի դքեզ և քո որդիքներդ ողբալ, ինչպէս ողբախօս Երեմիան, որ լայր և կոծէր այրիամայր և դերեվարեալ Երուսաղէմին վերայ:

Որդիքներդ գերի չը դնացին ի Բաբիլոն, այլ նոյն իսկ հայրենեաց երկրին ու դրկին մէջ աղքատութեամբ սարկացան ու գերեցան. հաց՝ որ նոցա կեանքն էր, խըլեցին զայն ու քանդեցին վաճառաշահութեան ագարակն, և այժմ դու համակ որդիքներովդ մնացիր նօթի և նուաղեալ:

Մի՛ լաք, գեղեցիկ մանուկներ, մի՛ կոծէք, կաթնատու մայրեր, թէ հայն ու կաթ պակսեցաւ՝ մեր երկնաւոր Հօր գութ, որ ճնճղուկներ կը հոգայ՝ զձեզ չի մոռնար. շուտ կանցնին ձեր սգոյ իրիկուն ու գիշեր, և առաւօտ ուրախութիւն կողջունէք.

Պատահար քո՛ երկնից պատահար չէր, այլ նոյն իսկ քո երկրէն և քո մէջէն. հին դրացի քաղաքացիներդ դաւեցին զքեզ. նոքա՛ որ քեզ հետ կուտէին հայրենի սեղանէն, նոքա՛ որ քո ճակատին քրտանց վաստակով լիապէս կը յագենային, ո՜հ անխնայաբար ոտնակոխեցին բարելից հացի սեղանդ:

Այսուհետև զարդիւնս ձեռաց իւրեանց կերիցեն:

Ես գիտեմ, Հայ՝ քո զօրութիւն և հոգին էր, և այն իսկ էր միայն որ յառաջադիմութեանդ զօրավիգ կը լինէր և դու կը քալէիր այնչափ, որչափ մանուկ մի նոր ոտք ելած: Արդեօք տնակից եղբայրներդ նախանձեցա՞ն, հայն ու վաստակ ձեռքէդ կորզեցին, որպէս զի դու առ քաղցի ուժաթափիս, ոգիդ և ջիղերդ թուլնան, ծունկերդ կթոտին, և այլ ևս չկարենաս յառաջադիմել դէպ ի յուսոյն ասպարէզ և լաւագոյն կեանք:

Բայց ի՞նչ էր քո դուզնաքեայ յառաջադիմութիւն, ես գիտեմ ու կը ճանաչեմ զքեզ. որդիքներուդ կէս մասն պանդխտութեան մէջ մաշելով կը մաշին, կէս մասն ևս այդ բիւր զրկանօք հանդերձ հազիւ կը հայթայթեն իւրեանց ապրուստ ու պարէն. միթէ առ ա՞յդ ևս մախացաւ երեցագոյն եղբայրդ և հին ու մոլար քաղաքականութեան դատաստանով վնասակա՞ր համարեց:

Եթէ այսպէ՛ս, ափսո՛ս, նա քան զքեզ առաւել տու-

ժեց ու չկրցաւ խորհրդով խելամտել, որ քո կարծեցեալ յառաջդիմութիւնդ երկրին ընդհանուր բարգաւաճման անխտրապէս շահ և օգտակար էր:

Եթէ յիրաւի և իրապէս յառաջդիմութեանդ քայլերը հաստատուն և զօրաւոր էին, այդ իսկ մեծ շահ էր անշարժ և անաշխատ եղբօրդ. զի դու զայն ևս մղելով մղելով յառաջ կը տանէիր հետ քեզ, և իբրև երկուլծակից ամոլներ հաւասար վաստակելով, հաւասար բաժնելով հայրենեաց ագարակին արդիւնքը, այնուհետև հաւասար կը վայելէիք ի փառս Օսմանեան Կայսրութեան:

Ո՛վ տիրասէր և ժրաջան Հայ մշակներ, հայրենեաց ագարակին մէջ այն ինչ միամտութեամբ կաշխատէիք բեղմնաւոր հունձերով երկիրը բարեշէն պահել և տիրոջ շտեմարանը գանձով ու ցորենով լեցնել, անտիրասէր ծառայակիցներ հրձիգ արարին ագարակն, խելաթափ եղեն ու չմտաբերեցին թէ այդ ոճրին արքունի գանձուն և բոլոր հայրենակից ժողովրդոց հաւասար զեան է:

Ո՛վ չի գիտեր, որ երկրի մը բնութենէն և զրկանքէն միապէս կը զրկուի բնակիչ ժողովուրդ, և կը թըշուառանան առհասարակ սովու և տառապանաց մէջ. Դուրանի և Աւետարանի որդիքներն՝ երկու դասն ի միասին պիտի նստին ու լան, մէկ դասն արևուն տակ և միւսն գիշերավար լուսնին, հա՛ց հա՛ց աղաղակեն:

Միթէ նա որ յափշտակեց ընկերին հաց, նա կուշտ պիտի ուտէ: Ո՛չ, ո՛չ. զրկանաց ու յափշտակութեան հաց առաւօտէն մինչև իրիկուն չի տևեր, շուտով կըսպառի. զի

այն հայն է միայն արդար ու անսպառ՝ որ մարդոց ճակատին քրտանց՝ արդար վաստակն է. ով որ առանց այս պայմանին հաց կուտէ աշխարհիս վրայ՝ պետական Աստուծոյն վճիռը կեղծանէ։

Զըդիտեմք քո մեղքն ի՞նչ էր, ո՛վ անդէն և հլու հնազանդ ժողովուրդ Վանայ, դու ոչ զէնք ունէիր և ոչ երբէք ըմբոստացար տիրող դաւաղանին դէմ. քո հաւատարմութեան չափ հինգ հարիւր տարի է, և քո զէնք միայն խոփն ու արօր, արուեստ և վաճառականութիւն քո զբաղումն էր. և միթէ այս եղև հատուցումն քո հաւատարիմ հպատակութեան։

Ինչ՞ խորհրդաւոր օր էր հրափորձութեանդ օր, ով անբախտ Վան. միթէ այն օր քեզ համար սև օ՞ր էր, երբ Թուրքաստանի պայծառ օր կսկսէր, երբ Բիւզանդիոնի Վոսփորէն հրանօթներ կորոտային, և Օսմանեան միապետ ինքնակալ Կայսր սահմանադրութիւն կը կնքէր. այն ուրախ օրերուն, ո՜հ, մոլեգնութեան հուրն դքեզ լափեց, ծուխով ու մոխրով խեղդեց քո խնդութեան ձայն և շունչ։

Մինչդեռ մայրաքաղաքն իւր համայն գաւառներով հրավառութեան տօն կը կատարէր, դու հէք ապերջանիկ Վան, քո տօն հրավառութիւն չէր. այլ ծախիչ ու համաճարակ կրակ մի, որ մի գիշերուան մէջ սպառեց դքեզ. այսր Բիւզանդիոնին մէջ պանդուխտ զաւակներդ երդոց ու նուագարանաց ձայներով կը պարէին, իսկ այդը բոցերուդ ճարճատիւն միայն կը լսուէր, որոց հետ կը խառնուէր նաև թշուառ որդիքներուդ սրբ, կոծ, լայն ու աղաղակ։

Ծոմն քեզ մօտ էր, ջրոց աղբիւրներ և վտակներ կը վազէին. կարաձմեռն էր, թանձր ձիւնի ճերմակ սաւանով պատած էիր, շէնքերդ ամէն հողակառոյց էին, մարդ կը զարմանայ, թէ որպիսի՞ դիւրութեամբ վառեց դքեզ կրակ։

Այդ մի հրաշք է աշխարհի առաջ. ե՞րբ հուրն զհող վառեց, ո՞վ լսեց ու տեսաւ որ Վանայ շէնքերն հրդեհէն վառին. թէ գիտէք՝ դո՛ւք պատմեցէք մեզ, ո՞ հարիւրամեայ ծերունիք, դուք դեռ ողջ էք և կապրիք այսօր, վկայեցէք երկրիս դատաւորաց առաջ։

Թուրքաստանի վերանորոգ սահմանադրութեան տօնին անշուշտ զոհ մի պէտք էր, և այն փառաւոր զոհ դու մատուցիր, ժողովուրդ Հայոց. բայց գիտցիր թէ կանխաւ քան զքեզ շատ զոհեր զոհուեցան այլ և այլ ժողովրդոց և պատերազմի դաշտերուն մէջ։

Եթէ այլքն այնպէս դատեն, որ քո զոհն անարիւն և դուշնաքեայ էր, սակայն ես կասեմ քո զոհն արիւն և կեանք կազմող զօրութիւնն էր. ո՜հ, նշտարակով բոլոր մարմնոյդ երակները բացին, թոյլ տուին որ դու այնուհետև տակաւ տակաւ մեռանիս չարաշուք աղքատութեան մէջ. և քո երակահատներ չքմեղս լինելով՝ աշխարհի առաջ ձեռքերնին լուանան և ասեն. «Բաւական եմք մեք յարենէ դորա։»

Ողորմիմ քեզ, ժողովուրդ Հայոց, ողորմիմ. արդեօք լաւագոյն չէ՞ քեզ, որ միանգամ մեռնէիր և կնքուէր քո հանդստեան գերեզման և դու երթայիր դադարէիր առ հարս քո, քանթէ այսպէս ի դեռին թալկանալով արիւնացամաք մեռնիս։ Ո՜հ, մինչև ե՞րբ անսամ

քեզ, որ ինքնաղոհ մեռնիլ սորվիս. աշխարհ սորվեցաւ այդ դասը, իւր մրցանակն առաւ. դու դեռ անուս մանուկ մնացիր։

Քո բախտն և քո յատկական առաքինութիւն այդպէս է, որ դու այդ օրինակ մեռնիս. ուրեմն փառք տուր երկնից ու մխիթարուիր. դու ևս եղիր այն զբաղեալ արդարոյն պէս աւերակիդ աղբիւրին վերայնստիր. ոչինչ տրտունջ կամ բարկութեան բան մի՛ խօսիր երկնից դէմ. ասա, «Կամքդ Տեառն օրհնեալ եղիցի, Տէր եւ Տէր էառ»։ Հանդուրժէ հարուածներուդ, թող այդ ևս քո անցեալ բիւրաւոր զոհերուդ հետ խառնուի։

Գիտեմ, մխիթարութիւն և սփոփանք դառնացեալ սրտիդ խոցերն ու վէրքերը չեն բուժեր, դի խիստ անօրինակ և դժնդակ դէպք էր որ քեզ դիպեցաւ այս ժամանակին մէջ, զոր քաղաքակրթութեան դար կը կոչեմք, և այն յուսալից օրերը, երբ Օսմանեան կայսրութեան նոր թուականն կսկսէր և երկրին շինութեան հիմն կը դրուէր, ո՜հ, այն օրերը դու քանդուեցար։

Այ՛ն, այն օրերը, երբ սահմանադիր օրէնք պարտք և իրաւունք կը քարոզէր, հաւասարութիւն կաւետէր, քո զրկանք և հարստահարութիւն աւելի ևս ծանրացաւ, երբ այլ և այլ կրօնի տարանջատ որդիքներն ձեռք ձեռքի տալով միաղգութեան դաշնակցութիւն և ուխտ կը կնքուէր մայրաքաղաքին մէջ. Վանտոսպ ըմբոստացաւ յանկարծ, խզեց այս նոր դաշնակցութեան կապը, երիցագոյն եղբայր կրասերին վերայ յառնելով կսպաննէր զայն։

Մի՞թէ նա հին որամտութիւն ունէր սրտին մէջ, որ

մուցաւ ժամանակին վերահաս տագնապն, չարար պատիւ խորհրդական ծերերուն՝ որ կայսերական քաղաքին խորհրդարանին մէջ դիշեր ու ցորեկ երկրին խաղաղութեան համար կը հոգային կը խորհէին հնարից եղք մի գտնել, և աղատել երկիրը իւր վերահաս վըտանգէն։

Ո՛վ Գուրա՞ն Գուրա՞ն, ես չեմ հաւատար այնպէս ինչպէս կը հաւատան ոմանք քո դպիրներէն, թէ դու քեզ հաւատացող որդիքներուն տիրապէս հրման կուտաս որ Աւետարանի աղքատ որդիքներուն ձեռքէն հացը յափշտակեն, ստրուկ ճանչնան, կեանքէն զրկեն. եթէ մեռցնեն՝ այդ ևս զոհ և արդարութիւն համարին. միով բանիւ միշտ բռնաւորութեան դաւաղանով ջախջախեն զիրենք։

Ես չգիտեմ թէ ջախջախելով ջախջախելով ի՞նչ շահեցան քո որդիքները։ Այդ հաշիւը տեսաւ կայսրութիւն և մեզ յայտնի է այսօր, որ Թուրքաստանի ժողովուրդ ամէն կրօնի աղդերը առ հասարակ ջախջախուեցան քաղաքակրթութեան առաջ. սուտ է թէ ասեմ՝ օտարին ձեռք զմեզ ջախջախեց։ Ո՛չ ո՛չ, մեք զմեզ անդիտաբար ջախջախեցինք և արդ փշուր փշուր եղանք։

Բա՛ռ թէ թշնամադիր ոգւով կը դրեմ և կը խօսիմ. ես Թուրքաստանի աշխարհին մի Հայ զաւակն եմ, եւ ի մանկութենէ անտի երկրին յառաջդիմութեան միշտ սիրահար. հաւատարմութեան կնիք միշտ անեղծ պահեր եմ ճակատիս վերայ. և առ այս վկայ կը կոչեմ հաղարութ հարիւր վաթսուն և երկու թուականը, յորում Կովկասի լերանց վերայ քո փառք և քո ներողամիտ մեծանձնութիւն կը հրատարակէի։

Հինգ ամբողջ դար է որ Հայն հետ քեզ կապրի և երկրիդ արդիւնաբեր մշակութեան համար քո հաւատարիմ և լծատար եզն է. դու տեսա՞ր երբէք, որ Հայն ընդվզեցաւ իր կենաց մէջ, կամ եղջիւր ածեց կարծրակուռ խարազանիդ դէմ, որով դու նորա թիկանց կաշին հարուածելով հարուածելով չերտ չերտ հանիր. տակաւին Հայն միշտ անմռունչ մնաց քո առաջ, քո լուծը միամտութեամբ կրեց և ոչ մի անգամ մտաբերեց որ թօթափէ իր պարանոցէն, զի հետ քեզ հաւատարմութիւն ուխտեր է:

Նախատեսէ՛, Նախատեսէ՛, ո՛վ Թուրքաստան. սուրն ու դանակ քաղաքակրթութեան պատենին մէջ դիր, դիտցիր եթէ ջանաս միշտ քո վաստակաւոր եզն իր վարած ակօսին մէջ մորթել՝ ինչ կը լինի այնուհետև քո շահն, ոչինչ, միայն միսն ու կաշին. և յայնժամ դու անագան ուրեմն կուշաբերիս. և աւա՜ղ, կը տեսնաս որ երկիրդ անմշակ մնացեր է, հացին ու դանձին տեղը կը տիրէ, երկրին զաւակներ քաղցած կը մնան: Ծանի՛ր ուրեմն ծանի՛ր, այդ ժրագործ եզին շահաբեր արդիւնքը, փոխանակ աղաղուն պահելոյ՝ դարման տար ու պարարտ պահէ զայն, որ իր ուժով կարենայ վարել քո խոպանացեալ երկիրը:

Ո՛վ սուրբ հաւատարմութիւն, ո՛վ պայծառ աստղ, որ կը փայլիս Հայու ճակատին վրայ. չգիտեմ, քո պայման, քո չափ և քո սահման մինչև ո՞ւր է, և Հայն իր հաւատարմութեան վարձն ու պսակը ե՞րբ պիտի ընդունի: Եթէ այսպէս դու անվարձ անպսակ մնաս և մերթ ևս փոխանակ վարձուցդ ծանր ծանր հարստահարուիս, ուրեմն այդ քո առաքինութիւն է զուր և ընդունայն է աշխարհիս առաջ:

Դու գիտե՞ս, ով հաւատարիմ ժողովուրդ Հայոց, մարդիկ և ազգեր կան, որ քո այնչափ հաւատարմութիւնդ կը ծաղրեն ու կը մեղադրեն զքեզ. երբ կը տեսնան որ խիստ անմռունչ և անզգայ կը լինիս հաւատարմութեանդ մէջ, մինչև անշունչ անբարբառ դիակ մի կը դառնաս դու, այնպէս որ պարկեշտութիւնդ կը նշաւակեն և կոխկռտելով կանցնին վերայէդ, և դու չես իմանար: Միթէ դռեհայ կա՞ն ես դու աշխարհիս երես, ես էլ կը դատիմ զքեզ թէ այդչափ տոկանաս և աղարտես մարդկութեան ազատ պատիւ:

Սակայն դուք մի վհատիք, Աւետարանի հարուածեալ որդիքներ. յոյս առ ու քաջալերուէ, ժողովուրդ Հայոց, երկհազար ամ է որ միշտ կը ջախջախուիս ու չես մեռնիր. Պարսիկ, Յոյն, Արաբացին և Կովկասեան բարբարոս ազգերը միշտ արշաւեցին ու քանդեցին քո հայրենիք. բայց դու անվկանդ՝ անյուսահատ տոկացող ոգի մի ունիս, որով կապրիս ու կը մնաս մինչև ցայսօր:

«Հաւատք քո կեցուցին զքեզ,» ասաց Քրիստոս. ուրեմն հաւատա, որ երկնից Նախախնամութիւն արդար և բարերար է. քո սերմն ու արմատ պիտի պահէ այդ բնիկ հողին մէջ, որ քո հայրենատուր ժառանգութիւն է. ընդունայն կը ճգնին այն ձեռք, որ կաշխատին զքեզ արմատախիլ առնել:

Ելէ՛ք ուրեմն, մի՛ նստիք և յուսահատ ողբաք այդ ապաժոյժ աւերակաց վերայ. ելէ՛ք, Վանեցիք, Թաղեցէք այդ մեռելը, վրան կոթող մի կանգնեցէք ու գրեցէք այս յիշատակարանը. «ԱՍՏ ԹԱՂԵՑԱՒ ՎԱՆԵՑԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴՈՑ ԳԱՆՁՆ ՈՒ ԿԵԱՆՔ:»

Այդ անյարիր մեռելին սդոյ հանդէսը կատարելէն յետոյ, ելէք դարձեալ առէք բահն ու բրիչ, հորդեցէք պեղեցէք ձեր աւերակները, դուք ձեզ համար ճարտարապետ եղիք, հիմը դրէք և շինեցէք ձեր աւերեալ տունն ու քաղաք. անցեալն էանց այլևս չի դառնար. ձեր դատն և իրաւունք թէ մոռանան աշխարհիս դատաւորներ, թողէք յայնժամ թող Աստուած տեսնայ։

Ո՞ւմ կայք և ո՞ւմ կըսպասէք այժմիկ, ձեր արտասուահոս աչքը դէպ յերկինս դարձուցէք. «Օգնութիւն ձեզ ի Տեառնէ եկեսցէ»։ Հայոց աշխարհի աւերակները շատ են, իւրաքանչիւր դաւառացին, քաղաքացին և գիւղացին թող իւր աւերակները շինէ, և դուք ձեզերն։

Գիտեմ չքաւորեցաւ ձեր ձեռք, ո՜հ, զոր այժմ կարկառելով այսի միայն հաց կը խնդրէք. գիտեմ, թէ քանի՞ դժուարին է կրկին կանգնել ձեր վաճառաշահութեան շէնքեր և նոր դրամագլուխ հաստատել, զոր երեսուն, յիսուն տարուան միջոց հազիւ ուրեմն հաստատած էիք։

Ձեզ ասեմ, ձեզ ասեմ, Վասպուրական երկրի գիւղական ժողովուրդք, ձեզ յորդոր կարդամ, ձեր առաքինութեան ժամն է ահաւասիկ. Վան քաղաք ձեր նեղութեան ապաստանարան էր, դուք ամեն անձկութեան մէջ քաղաքացւոց կը դիմէիք. իսկ այժմ նոքա ձեզ կը դիմեն, զի աշխարհիս շրջանն այսպէս կը դառնայ։ Տուէք ուրեմն ինչ որ ունիք. փոխարինեցէք սիրով մինչև կազդուրի քաղաքացւոյն ուժը, գիտցէք ձեր թև ու թիկունք քաղաքացին է. հասէք յօգնութիւն, որ ձեր կենսական ուժը զօրանայ դարձեալ և խոպառ չը ջլատի։

Իսկ դուք, անկեալ քաղաքացիք, դուք առաւել պէտք է ձեռն տաք միմեանց, որ ի միասին յոտին կանգնիք. ահաւասիկ է ձեր առաքինութեան ժամ, ընկերսիրութեան ժամ, Քրիստոնէական եղբայրսիրութեան ժամ, անձնանուէր բարեկամութեան ժամ, միաբան հոգւով ու շնչով գործելոյ ժամ, ճշմարտութիւնը բարձրաբարբառ խօսելոյ ժամ. խօսեցէք, վկայեցէք, մի՛ երկնչիք, խօսեցէք ու հաւատացէք որ ճշմարտութիւն պիտի ազատէ զձեզ։

Մինդամ ելիք ու մտաք այդ խաչակրութեան ասպարէզը. դուք քրիստոնէութեան արժանաւոր որդիքներ կը լինիք, թէ անտրտունջ ոգւով տանիք այդ խաչերը. կարդացէք պատմութիւն, յիշեցէք ձեր անմահ առաքինի նախնիքն ու պապերը, որոց գլխէն այդ անցքերը շատ անցան արիւնով ու մահով հանդերձ։

Թէ յիրաւի՞ ձեր արիական նախնեաց նմանող հարազատ որդիքներն էք, այս հրոյ ու սրոյ ժամանակին մէջ ցուցէք ձեր առաքինութեան հանդէսը, զօրացէք ու զօրացուցէք վհատած ոգիները, նկուն մի՛ լինիք փորձութեան առաջ՝ զի մարդոյն կենաց ճանապարհ այս աշխարհիս վերայ լի է դժնդակ փուշերով։ Առաքինիք միայն զայն կոխելով կանցնին, իսկ վատասիրտներ կը լքանին։

Կոխեցէք և անցէք, ո՛վ աշխատաւոր եղիք, մի՛ թափառիք ու հեռանաք ձեր աւերակ ագարակէն, ելէք դարձեալ զոյդ զոյդ լծուեցէք. ձեր սամոսիք պինդ կապեցէք ընկերական սիրով, հեծելով փնչալով վարեցէք ու պատուեցէք այդ տառապանաց ակօսն. ժիր մշակներ, գոգնոց կապեցէք, լի յուսով ցանեցէք ձեր վաս-

տակասէր քրտանց սերմն. պահ մի ևս սպասեցէք, զի ձմեռ է, ձիւն և սառնամանիք ծածկեր են մեր աշխարհ։

Գարուն մօտ է, Հայոց աշխարհ, և պիտի դայ ծիծեռնակ քեզ աւետիս տայ, թէ Թուրքիոյ աշխարհին երկունք կանցնի և իւր վերածնութեան օրը հասած է, և դու տես յայնժամ թէ ի՞նչպէս այդ մոխրակոյտ ագարակն անդրէն բողբոջելով կը կանաչի, և քո վերջին բարդաւաճ կը լինի քան զառաջին։

Դու լոյս և արև կը սիրես, ժողովուրդ. լոյս և արև զքեզ պիտի վերածնին, քո հրայրեաց երկիր մարդաբեռին կը դառնայ. լուսին ի վերուստ վերայէդ անցնելով պիտի զարմացմամբ հայի երբ տեսնայ, որ Արծրունեան աշխարհի որդիքներ համակ արծուապէս նորափեսաւոր զարդարուած են, զոր բռնութիւն փետտեց որ լերկամարմին անպատանք մեռնին։

Կերպասն և չուխայն և պէսպէս Եւրոպիոյ զարդեր հանին քեզմէ, ժողովուրդ, մի շուարիր թէ դու մերկ անպատսպար պիտի մնաս. այդ քեզ թող մի բարի խրատ լինի. խելաբերէ այսուհետև, կեանքիդ տնտեսութեան դասերդ լաւ սորվիր. վաղուց մոռցած էիր, բարակման կտաւներ կը հագնէիր, յիշէ այժմիկ քո հատ կտաւն ու խամաքին։

Շուտ արա, շուտ արա, հին կտաւագործութեան հոբերդ բաց. Հայոց տիկնայք, ճախրակ մանեցէք, թել հասուցէք. և դուք այրեր, կտաւ գործեցէք. կարմիր կապոյտ ներկեցէք. վա՜յ, ի՞նչ վայելուչ է, եթէ դուք ձեր աշխատութեան պարզ ձեռագործներ հագնիք որ շատ

տոկուն է և շահաբեր, և միանգամայն կը ջեռուցանէ ձեր բաց կուրծքեր և քրտնած թիկունք։

Ցէր ապաւէն մեր, զքեզ կը յիշեմք միայն մեր նեղութեան մէջ, դու ես միակ անկեալ ժողովրդոց խընամակալ հայր. ի՞նչ է մահկանացու մարդոյն դրիչ և լեզուն, որ կարենայ մխիթարել քո վշտահար ժողովուրդ. և ի՞նչ է մարդոյն ապիկար ձեռք, որ կարենայ բառնալ հարստահարեալ զաւակներուդ բաղմապատիկ աղէտները։ Բարձ, Ցէր, բարձ, այլևս բաւական է քեզ՝ հաւատացող ժողովուրդին տառապանք և Հայկայ տան աւերումն. վերաշինէ մեր քանդուած աշխարհ և մեր փլած տունը. եթէ դու չը շինես՝ ի նանիր վաստակին շինողներ։

Ցէր բարձրեալ և ահարկու, դու կը հայիս և կը տեսնաս Երկնից պետական ամբոխդ, որ երբ ստրկացած ազգեր կուլան քո առաջ, ինչպէս կուլայ կարօտ մանուկ իւր ծնողաց առաջ, աշխարհիս ազատ և հզօրացեալ ազգեր կայսրանեն ծաղր ու կատակ կառնեն զմեզ. երբ մեք մեր զրկանաց դատաստան և իրաւունք միշտ քեզ կը թողումք գիտնալով որ անօգնական ազգին՝ միակ ապաւէն և զօրութիւն դու ես։

Աստուած մարդասէր, մեր գթած Սամարացին դու ես, մարդոց այս անխնայ դատաստանէն զմեզ ազատէ. որք Երիքովի ճանապարհի վերայ ինկած վիրաւորը կը տեսնան, և գիտեն իսկ, որ նա ինքնին անյարիր է, դարձեալ զանց կառնեն. մին կասէ, ի՞նչ շահ ունիմ ես որ ձէթ և գինի ածելով վէրքերդ պատեմ, և միւսն՝ թէ ի՞նչ վարձ կուտաս, որ զքեզ բառնամ տանիմ մին-

չև ազատավայր պանդոկ, ուր դարման տանելով քեզ ողջնաս և նոր կեանք ստանաս աշխարհիս վերայ :

Այսպէս անկարեկիր են մարդիկ, ո՛վ Տէր, առանց պայմանի մեր վէրքերուն դեղ և դարման չեն դներ, և առանց փրկանաց գին խնդրելոյ զմեզ չեն փրկեր, սորա համար Դաւիթ իւր ժողովուրդին խրատ կուտար. «Մի յուսայք յիշխանս որդիս մարդկան, զի ոչ գոյ փրկութիւն ի նոսա :»

Ես կը լսեմ, Տէր, թող այրած ժողովուրդին հեծեծանքն միայն առ քեզ հասնի. բայց ի՞նչպէս լսեմ. թէ լսեմ ես, Վասպուրականի քարեր կաղաղակեն, երկու բիւր ժողովրդոց աչք վկայ են այս ճշդրիտ իրողութեան, թէ աշխարհիս իշխանութեան դատաւորներ այս վկայութիւն չընդունին, այնուհետև դատ և դատաստան քեզ կը մնայ, ո՛վ Իրաւարար Տէր :

Մամո՛ւլ, մամո՜ւլ, որ քան զարծիւ արագաթև ես, ա՛ռ և տար մորմոքող սրտիս ցաւն ու հառաչանք և աչքիս աղէջուր կաթիլները, տար ցօղէ այն իմ այրած Հայրենեաց փոշիացեալ աւերակներուն վերայ, ցօղէ վառուած ու մրկած սև սիրտերուն վերայ :

Գիտե՛մ, գիտե՛մ, այս իմ հեռաւոր նժդեհութեան վայրէս զքեզ լալ միայն հերիք չէ, ո՛վ իմ բնակամունդ Հայրենիք, ո՛վ իմ խանձեալ խանձարուր. գամ գամ և քեզ հետ կական բառնամ, մոխրակուտիդ վերայ ողբանուէր նստելով զքեզ ողջագուրելով լամ:

ՀՀ Ազգային գրադարան
NL0249552
ՀՀ Ազգային գրադարան
NL0249551